

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՅԿ ԻՇԽԱՆԻ**

**19-ՐԴ ԴԱՐԻ 50-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՈՈՒՍԱՍԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ  
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՅԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

**Է.00.02. «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում**

**Գիտական ղեկավար՝**

**պատմական գիտությունների  
թեկնածու,  
դոցենտ՝ Մ.Ե. Մարտիրոսյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

**պատմական գիտությունների  
դոկտոր,  
պրոֆեսոր՝ Դ.Ս. Աբրահամյան**

**պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ՝ Է.Գ. Հովհաննիսյան**

**Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական)  
համալսարան**

**Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 17-ին, ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՆ-ի 006 “Համաշխարհային պատմություն” մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):**

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում**

**Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 15-ին:**

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝**

**պ.գ.թ., դոցենտ Ռ. Ղազարյան**

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Թեմայի արդիականությունը:** Ուսուաստանի 19-րդ դարի 50-60-ական թվականների հասարակական-քաղաքական կյանքի, ինչպես նաև արևելահայ իրականության մեջ նրա արձագանքները ունեն ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Թեմայի համակողմանի ուսումնավորությունն արդիական է ոչ միայն Ուսուական կայսրության 19-րդ դարի 50-60-ական թվականների հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններն հասկանալու, այլև արդի հասարակական-քաղաքական կյանքում այդ իրադարձությունների կրկնման միտումները վերհանելու և համարժեքորեն գնահատելու տեսանկյուններից:

19-րդ դարի 50-60-ական թվականների հասարակական-քաղաքական կյանքին անդրադարձել են ինչպես մինչխորհրդային, այնպես էլ խորհրդային և հետխորհրդային շրջանի պատմաբանները: Հասարակական կյանքը ունի այնպիսի դրսորումներ, որ յուրաքանչյուր հասարակարգ փորձում է ծառայեցնել իր քաղաքական նպատակներին և խնդիրներին: Վրդի ռուսական պատմագիտությունը, ազատվելով նախորդ շրջանի գաղափարական կապանքներից, նորովի է ներկայացնում պահպանողականների և ազատականների գործունեությունը՝ չգերազանցած որևէ ուղղություն:

Վրդի հայ պատմագիտության մեջ 19-րդ դարի ռուսական հասարակական-քաղաքական կյանքի պատմությունը մինչ օրս համապարփակ և համակողմանի ուսումնավորության չի ենթարկվել, որը խիստ անհրաժեշտ է հայ պատմագիտության մեջ վերագնահատելու 19-րդ դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական կյանքի պատմությունը:

ԽՄՐՄ-ի փլուզումից հետո, Ուսուաստանի Դաշնությունը որդեգրելով ազատական քաղաքականություն, սկսեց լայնածավալ բարեփոխումների իրականացում, որը լի էր հասարակական-քաղաքական, տնտեսական և մշայկութային ցնցումներով: Բարեփոխումների անցկացմանը գորգահեռ նորաստեղծ ՌԴ-ն բախվեց նաև մի շարք այլ խնդիրների՝ մասնավորապես ազգային հարցի հետ: 2003թ. դեկտեմբերին «Ենիահա Ռուսա» կուսակցության հաղթանակից հետո, ՌԴ-ն անցավ ավելի կոշտ քաղաքականության և բազմաթիվ ազատական գործիքներ դուրս մնացնել քաղաքական պայքարից: Այսօր, ենթելով Ուսուաստանը իշխող կուսակցության գաղափարական հիմնարենքերից, մեծ տեղ է տրվում անցյալի պահպանողական գործիքների կյանքին ու գործունեությանը: Զուգահեռներ անցկացնելով 19-րդ դարի 50-60-ական թվականների և 20-րդ դարավերջի ու 21-րդ դարավագրի իրադարձությունների միջև, կարող ենք փաստել, որ դեպքերը և իրադարձությունները որոշակիորեն կրկնվում են: Եթե 19-րդ դարուն Ուսուաստանի համար այդքան անհրաժեշտ բարեփոխումները անցկացրեցին ազատականները, այնուհետև հայտնվեցին քաղաքական մեկուսացման մեջ, ապա 1990-ական թվականների բարեփոխումների շրջանը ներկա իշխանությունների կողմից անվանվեց չարության տարիներ, իսկ ազատական քաղաքականության կողմնակիցները

զրկվեցին քաղաքական իշխանությունից: Եթե 19-րդ դարում ռուս պահանջականներն առաջ էին քաշում Ռուսաստանի ինքնատիպ գարգացման մողելը, ապա այսօր նույնը նկատվում է իշխող վերնահավի մոտ, որի վառ ապացույցն է ռուսական իշխանությունների կողմից ԽՍՀՄ նախկին համբապետություններին առաջարկվող նարսային նոր միությունը կամ այսպես կոչված «ԵվրԱՅՅԿ»ը: Եթե 19-րդ դարում Ռուսական կայսրությունը փորձում էր իր շուրջը համայնքել ազգակից սլավոնական ժողովուրդներին և գերիշխող դիրք ստանալ Եվրոպայում՝ առաջնորդվելով համալավոնական գաղափարախոսությամբ, ապա այսօր Ռուսաստանի Դաշնությունը, օգտագործելով «Եվրասիական» և Ռուսաստան-Բելոռուս միության գաղափարները, փորձում է վերականգնել իր դիրքերը նախկին ԽՍՀՄ-ի տարածքում:

Չայեցակարգային նոր մոտեցումների մշակումը կնպաստի ճիշտ գնահատել ռուսական հասարակական-քաղաքական, գաղափարական հոսանքների գործունեությունը տնտեսական և ազգային տեսանկյունից: Մեր կողմից կատարված ուսումնախրությունը ներկայացնում է նաև համալավոնական, մեծապետական գաղափարների ստերված էջերը:

#### **Աստենախոսության նպատակները ու խնդիրները:**

Աստենախոսության թեմայի ընտրության նպատակը պայմանավորված է 19-րդ դարի 50-60-ական թվականների ռուսականացման գաղափարական կյանքի և արևելահայ իրականությունում նրա արձագանքների համակողմանի և նորովի լրաբանման անհրաժեշտությունից:

Անդրադարձնալով ռուսաց և արևելահայ գաղափարական հոսանքների վերլուծությանը՝ առաջարդել ենք հետևյալ խնդիրները.

1. Լրասարանը 19-րդ դարի 30-40-ական թվականների ռուսական հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, պետական կառավարման համակարգի կողմից հասարակական կյանքի վերահսկումը, ինչպես նաև պահպանական և ազատական հոսանքների ծևավորման ընթացքը:
2. Ուսումնախրության դրիմի պատերազմի ժամանակ ռուսական հասարակական-քաղաքական մտքի գնահատականները և քննադատական մոտեցումները պատերազմի և դրանից բխող հետևանքների վերաբերյալ:
3. Բացահայտել և վերլուծել Ռուսաստանում դրիմի պատերազմի ժամանակ համալավոնական գաղափարախոսության տարածման պատճառները:
4. Ներկայացնել դրիմի պատերազմի արձագանքներն արևելահայ իրականության մեջ:
5. Նետազութել և լրաբանել ռուսական հասարակական-քաղաքական կյանքը Գյուղացիական ռեֆորմի և Մեծ բարեփոխումների իրականացման փուլերում:
6. Նորահայտ արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնալրյուրների և մանրվի ուսումնասիրության միջոցով ցույց տալ Ռուսաստանում 1850-ական թվականների երկրորդ կեսին և 1860-ական թվականներին համալավոնականության արմատավորման, հանասլավոնների կողմից բարյան գերմանացիների նկատմամբ անհանդուրժողական

Վերաբերմունքը, ինչպես նաև ռուսական հասարակական-քաղաքական մտքի գնահատականը լեհական և ռուսականական հաղոցի հանդեպ:

7. Բացահայտել և վերիանել արևելահայ հասարակական մտքի արձագանքները Ալեքսանդր Երկրորդի կողմից որդեգրած ազատական քաղաքականության, իրականացվող բարեփոխումների նկատմամբ, ինչպես նաև գնահատել 1863-64թ. լեհական ապստամբության վերաբերյալ արևելահայ հասարակական կարծիքը:

**Ատենախոսության գիտական նորույթը:** 19-րդ դարի 50-60-ական թվականների ռուսական հասարակական-քաղաքական մտքի վերաբերյալ ուսումնասիրվել և գրվել են մի շաք արժեքավոր գիտական աշխատություններ և հոդվածներ ինչպես մինչյոդիրդային, այնպես էլ խորհրդային և արդի ռուս պատմաբանների կողմից: Խնդրո արարկա հարցի ուսումնասիրությունից համոզվեցին, որ արևելահայ իրականության մեջ, մեզ հետաքրքրող թենայի հիմնահարցերից առավել կարևորները մասկերեսորեն են լուսաբանվել: Մինչհեղափոխական և խորհրդային պատմագիտությունը համակողմանիրեն չի լուսաբանել պահպանողականների և ազատականների գաղափարական տարածայնությունները կապված Ղրիմի պատերազմի, բարեփոխումների և համապատասխանության հիմնահարցերի հետ: Նշենք դրանցից մի քանիսը. ազգային խնդիրների հակասական գնահատումը համապատասխանության գաղափարական համատեքստում, ճորտատիրական իրավունքի վերացման և հետոքեֆորման շրջանի բարեփոխումների պատմության ոչ բազմասպեկտ գնահատումը: Ուսասատանում ծավալված հասարակական-քաղաքական մտքի, հոսանքների ու խճավորումների պայքարի՝ արևելահայ հասարակական մտքի արձագանքներին հաճախ անդրադարձել են խորհրդահայ պատմաբանները, սակայն որքանով այն առնչվել է իրենց հետազոտության հիմնահարցերի հետ: Ուստի, սույն աշխատանքն իր բովանդակությամբ և հարցադրումներով փորձ է նորահայտ արիշվային փաստաթերի, տպագիր սկզբնադրյուրների և ժամանակի մասնվի հենքի վրա անկողմնակալ և համակողմանի վերլուծությամբ վերհանել ու ներկայացնել 19-րդ դարի 50-60-ական թվականների ռուսական հասարակական-քաղաքական պահպանողական, ազատական և արմատական ուղղությունների հետևորդ գործունեությունը, նրանց կողմնորոշումը համապատասխանականությամբ, ազգային հարցի և երկրությունը իրականացվող բարեփոխումների խնդրում, ինչպես նաև Ուսական կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների գնահատմանը արևելահայ հասարակական մտքի՝ պահպանողական և ազատական հոսանքների կողմից, որը կմապաստի հասարակական-քաղաքական մտքի պատմության նորովի լուսաբանմանը:

**Ատենախոսության ժամանակագրական սահմանները:** Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 19-րդ դարի 50-ական թվականների սկզբից մինչև 1860-ական թվականների վերջը: Ժամանակագրության սկզբաք հանդիսանում է Ղրիմի պատերազմը, երբ ռուսաց հասարակական-քաղաքական միտքն աշխուժանալով սույն ժամանակատության ներքից Նիկոլայ Առաջինի ներքին և արտաքին

քաղաքականությունը, սկզբնավորվեց համալավոնական գաղափարախոսությունը: Ժամանակագրությունն ընդգրկում է մինչև 1860-ական թվականների վերջը: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ շրջանում, Ալեքսանդր Երկրորդի գահ բարձրանալուց հետո, Ռուսական կայսրությունը որդեգրեց ազատականացման քաղաքականություն, անցկացվեցին Գյուղացիական ռեֆորմը և մի շարք այլ բարեփոխումներ, միաժամանակ աշխուժացան ազգայանական տարրերը և արմատավորվեց համալավոնական գաղափարախոսությունը: Աշխուժացավ նաև արևելահայ հասարակական միտքը:

Դաշվի առնելով ատենախոսության համար պատճական որոշակի ժամանակաշրջանի ներկայացման կարևորությունը՝ անհրաժեշտ ենք համարել հակիրծ անդրադաշնալ Ռուսաստանի 19-րդ դարի 30-50-ական թվականների հասարակական-քաղաքական կյանքին և Արևելյան Հայաստանի կացությանը:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմք:** Աշխատանքի մեթոդաբանական հենքում պատճականության և գիտական օրյեկտիվության սկզբունքի համադրումն է, որի շնորհիվ հնարավոր է դարձել իրադարձությունները դիտարկել ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և դիանուշիկական կապի մեջ: Տարբեր արկիվային վավերագրերի, սկզբնադրյուրների, մանուլի և ուսումնասիրությունների համադրումն ու Վերլուծությունը հնարավորություն է տվել հիմնահարցը լուսաբանել մեկ ամբողջության մեջ: Ելնելով թեմայի բազմաշերտ ու բազմակողմանությունից՝ աշխատանքում օգտագործվել են բազմամեթորանական հնարները պատճակերլուծական, պատճառնական, փաստական տվյալների համադրման և վելուծության, ինչպես նաև հասարակական մտքի պատճության հետ առնչվող տեսակետների և հարցադրումների քննական մեկնության մեթոդները:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը:** Ատենախոսության հիմնադրույթները կարող են հիմք հանդիսանալ Ռուսաստանի գաղափարաքաղաքական և արևելահայ հասարակական հոսանքների պատճության ուսումնասիրման, քաղաքագիտական ուսումնասիրությունների, պատճական պատճառական ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական մտքի վերագնահատման, ինպես նաև խորհրդային պատճառության մշակված դրույթների նորովի մեկնաբանման համար: Աշխատանքում տեղ գտած կարևոր հիմնադրույթները կարող են օգտագործվել ուսումնական գործընթացների կազմակերպման համար:

**Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը:** Ատենախոսությունը հաստատվել է ՀՊՄԴ Պատճության և իրավագիտության ֆակուլտետի խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ՀՊՄԴ Պատճության և հրավագիտության ֆակուլտետի Համաշխարհային պատճության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում, ինչպես նաև տարբեր գիտաժողովներում:

**Օգտագործված աղբյուրների ու գրականության տեսություն:**  
Աշխատանքը շարադրվել է մեր կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված տարբեր արխիվների վավերագրերի, ժամանակի նամուկի հարուստ նյութերի, տպագիր սկզբանդրյուրների ու հրապարակի վրա եղած պատմագիտական գրականության հենքի վրա:

Օգտվել ենք Ռուսաստանի Դաշնության արխիվների և Երևանի Ս.Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցների մի շարք արխիվային ֆոնդներից:

Ռուսաստանի Դաշնության պետական արխիվի  
(Գոսудարչութեան արքայի պահպանական առաջնային գործադրություն) Երևորդ բաժանմունքի ֆոնդներից օգտվելիս օգտագործել ենք հիմնականում համալսարական շարժմանը նվիրված, լեհական, ուկրաինական, բալթյան գերմանացիների հետ կապված հարցերին վերաբերող պետական և հասարակական գործիքների նամակագրություններից, ինչպես նաև Ս. Լորիս-Մելիքովի ֆոնդից Դրիմի պատերազմի տարիներին Կովկասյան ճակատում նահմեդականներից կանավորական ջոկատների կազմակերպման հարցերի վերաբերյալ<sup>1</sup>:

Ռուսաստանի գրականության և արվեստի պետական արխիվի (Российский государственный архив литературы и искусства) պահոցներից օգտվել ենք հիմնականում պատմաֆիլական խմբակի անդամների, նաև պահպանական համակարգություններից, ուր լուսաբանվում են Դրիմի պատերազմի տարիներին և դրանից հետո ընկած ժամանակահատվածում համալսարական գաղափարները և ճորտափիրական իրավունքի վերացման հետ կապված հարցերը<sup>2</sup>:

Երևանի Ս.Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցներից օգտվել ենք Կաթողիկոսական դիվանի, Լազարյանների և Պատկանյանների ֆոնդներից, որոնք լուսաբանվում են Դրիմի պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցու, արևելահայ հասարակական գործիքների գործունեությունը, Ռուսաստանում Մեծ բարեփոխումների շրջանում արևելահայ հասարակական մտքին և 1863-1864թթ. լեհական ապստամբության արձագանքներին վերաբերող հարցերը<sup>3</sup>:

Օգտվել ենք նաև Սոսկվայի Կենտրոնական պատմական արխիվի (Центральная национальная историческая библиотека им. Н.М. Карамзина в Москве) Մոսկվայի Հայ-գրիգորյանական հոգևոր վարչության ֆոնդից, նյութեր ենք քաղել Դրիմի

<sup>1</sup>Государственный архив Российской Федерации - (ГАРФ), ф. 109, секретный архив (с/а), оп. 1 ,д. 138, 145, 367, 1764, 1764, оп. 3а оп. д. 109, 4а. д. 405, 413, ф. 569, оп.1, д. 2.

<sup>2</sup>Российский государственный архив литературы и искусства - (РГАЛИ) ф. 10 (Аксаковы), оп.1, д. 215, оп. 2д. 18, 25, ф. 72(Будовы) оп. 2,д. 12. ф. 236(Киреевские), оп.1, д.19.

<sup>3</sup>Երևանի Ս.Մաշտոցի անվան Մատենադարանի պատմական արխիվային գործիքների համար չունի, վավ. 333, թղթ. 172. վավ. 3, 81; Լազարյանների ֆ.թղթ. 100, գործը համար չունի, վավ. 10, թղթ. 104, գ.հ.չ., վավ. 34, թղթ. 108, գ. 83, վավ. 5, 6, գ. 96, վավ. 16; Պատկանյանների ֆ., թղթ. 139. վավ. 93, թղթ. 144. վավ., 293:

պատերազմի տարիներին Յայ առաքելական եկեղեցու բարեգործական գործունեությանը վերաբերող փաստաթղթերից<sup>4</sup>:

Աշխատանքի շարադրման ընթացքում օգտվել ենք հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված սկզբնադրյուրներից, որոնք ժամանակաշրջանի պետական, հասարակական և քաղաքական գործիչների հոդվածներն են, ելույթները, օրագրերը, հուշերն ու նամակները:

Դրիմի պատերազմի, հանասլավոնականության, ազգային հարցի և բարեփոխումների վերաբերյալ ռուսերեն աղբյուրները առանձնացրել ենք ըստ գաղափարաքաղաքական հոսանքների ուղղվածության: Պահպանողական հոսանքի ներկայացուցիչներից կանոնի ենք Ֆ. Տյուտչիկի, Պ. Վալուկի, Ս. Պոգոռինի, Ա. Բլուտովյահ, Վ. Լամանսկու, Կ. Լենտսի, Ա. Դամիլկովի<sup>5</sup>, սլավոնաֆիլական խմբակի ներկայացուցիչներից Ի. Ալսակովի, Ա. Խոնյակովի, Ա. Կոշեյովի, Յու. Սամարինի<sup>6</sup>, արևմտական-ազատականներից Պ. Չաադասի, Ա. Գրանովսկու, Ի. Վերնադսկու, Մենյոնով-Զյան-Շանսկու, Կ. Կավելինի, Բ. Չիչերինի, Ս. Սոլովյովի<sup>7</sup>, դեկարիստներ Ս. Տրուբեցովի, Վ. Շտենգելի, Ի.

<sup>4</sup> Центральный исторический архив Москвы - (ЦИАМ), ф. 2050, оп.1, ед. хр. 142.

<sup>5</sup> Ламанский В.А., Национальности ималянская и славянская в литературном, политическом отношениях, Отечественные записки, Москва. 1864, N11; Дневник графа Петра Александровича Валуева (1847-1860гг.), Русская старина, С.Петербург, 1891, N4, с.167-182, N5 с. 338-360, N6 с. 603-616; Воспоминание графини Антононы Дмитриевны Блудовой (написаны в 1867), Русский архив, Москва, 1889 N1, с. 39-107; Тютьчев Ф.И., Полн. собр. соч., С.Петербург, 1913; Николай Первый и его время. Документы, письма, дневники, мемуары, свидетельства современников и труды историков, т. 2, Император Николай I Павлович. 1850. Записка графинии А.Д. Блудовой, Москва, 2002; Леонтьев К.Н., Дипломатические донесения, письма, записки, отчеты (1865-1872), Москва, 2003; Данилевский Н.Я., Россия и Европа. Взгляд на культурные и политические отношения Славянского мира к Германо-Ромаскому, Москва, 2008; Погодин М.П. Вечное начало. Русский дух, Москва, 2011.

<sup>6</sup> Самарин Ю.Ф., Сочинения. т.2, Москва, 1878, т.3. 1885; Аксаков И.С., Речь о Феодоре Васильевиче Чижове, произносенный 18 декабря 1877г., Русский архив, Москва, 1878, N1, с. 129-137; Кошелев А.И., Записки, Берлин, 1884; Письма к А.Н. Попову (1840-1860). Из бумаг А.Н. Попова. Письма А.И. Кошелева к А.Н. Попову, Русский архив, Москва, N 3, 1886, с. 320-368; Аксаков И.С., И.С. Аксаков в его письмах, в 3 т-х, т.3, Москва, 1892; Хомяков А.С. Полн. собр. соч., в 8т., т.8, Москва, 1904; Аксаков И.С., Письма к родным 1849-1856, Москва, 1994; Аксаков Иван, Наше знамя-русская народность, Москва, 2008.

<sup>7</sup> Вернадский И.В. Романское начало и наполеониды, С.Петербург, 1855; Никиченко А.В., Записки и дневник (1826-1877), в 3т-х, т. 2, С.Петербург, 1893; Т.Н. Грановский и его переписка, в 2-х т., т.2, Москва, 1897; Кавелин К.Д., Собрание сочинений, С.Петербург, 1897-1900; Чичерин Б., Польский и еврейский вопросы. Ответ на открытые письма Н.К. Ренненкампфа, Берлин, 1901; Чичерин Б.Н., Восточный вопрос с русской точки зрения. Приложения к Запискам князя С.П. Трубецкого, С.Петербург, 1906; Чаадаев П.Я., Сочинение о письмах. В2-х т., т.2, Под ред. М.Гершензона, Москва, 1914; Семенов-Тян-

Յակուշկինի, Ա. Բրիգենի, Ն. Բասարգինի<sup>8</sup>, արմատական-հեղափոխական հայացքներ կրողներից Ա. Գերցենի, Վ. Բելինսկու, Մ. Բակունինի և Ն. Չեռնիշևսկու<sup>9</sup> հուշերը, օրագրերը, տպագիր նամակներն ու հոդվածները: Աշխատանքում օգտագործել են նաև այլ տպագիր սկզբնաղբյուրներ, որոնք արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի մեջ հետաքրքրող իրադարձությունները, և հնարավորություն են տալիս համակողմանի լուսաբանել դրան<sup>10</sup>:

Հատկապես կարևորում ենք Ս. Կատկովին Վերաբերող աղբյուրները, քանի որ, գործունեության սկզբնական շրջանում նա վառ արտահայտված ազատական էր, սակայն 1863-64թթ. անցում կատարեց դեպի պահպանողականների ճամբար<sup>11</sup>:

Հայերեն տպագիր սկզբնաղբյուրներից օգտվել ենք արևելահայ պահպանողական և ազատական հոսանքների ներկայացուցիչներ՝ Ար. Արարատյանի, Ստ. քահանա Սամղինյանցի, Կ. Վարդապետ Շահնազարյանցի, Գ. Ախվերդովի, Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի իրապարակախոսական աշխատանքներից և նամակներից, ուր

---

Шанский, Эпоха освобождение крестьян в России (1857-1861гг.). В воспоминаниях бывшего члена-эксперта и заведывавшего делами Редакционных комиссий. в 3-х т., т.3, Петроград, 1915; Письма К.Д. Кавелина о смерти Николая I Т.Н. Грановскому, Литературное наследство, т. 67. Москва, 1959; Кавелин К.Д. Чичерин Б.Н., Письмо к издателю, Голоса из России, Кн. 1-3, вып., 1, Москва, 1974; Феоктистов Е.М., За кулисами политики и литературы. 1848-1896. Воспоминания, Москва, 1991; Соловьев С.М., История падения Польши. Восточный вопрос, Москва, 2003.

<sup>8</sup>Якушкин И.Д., Записки. Статьи, письма. Москва. 1951; Штейнгель В.И. Сочинения и письма в 2-х т., т.1, Записки и письма, Иркутск, 1985; Бриген А.Ф. Письма Исторические сочинения, Иркутск, 1986; Трубецкой С.П., Материалы о жизни и революционной деятельности. в 2-х т., т.2, Письма, Дневник 1857-1858гг. Иркутск. 1987; Басаргин Н.В., Воспоминания, рассказы, статьи, Иркутск, 1988.

<sup>9</sup>Герцен А.И., Собрание сочинение и писем, Под. ред. М.К. Лемке, в 21т., Петроград, 1919-1923; Бакунин М.А., Избранные сочинения в 5-ти т., Петроград, 1920; Чернышевский Н.Г., Полное собрание сочинений в 15-и т., Москва, 1939-1953; Белинский В.Г., Полн. соб. соч., в 13-и т., Москва, 1953-1959; Герцен А.И., Собр. соч. в 30т., Москва, 1954-1966; Чернышевский Н.Г., Письма без адреса, Москва, 1983.

<sup>10</sup>Воины России с Турцией 1828-1829 и 1853-1854, Русская старина, Москва, 1876, N8; Россия и Сербия в конце Николаевского царствование. (1853). Письмо неизвестного серба в Петербург из Парижа, Русский архив, Москва, 1878 N3; Письмо В.А. Жуковского к князю Варшавскому, Графу И.Ф. Паскевичу-Эриванскому, Русский архив, Москва, 1878, N8; Собственноручные письма князя П.А. Вяземского К.Д. Северину, Русская старина, 1896 N 1; Частная переписка П.Г. Галагина. Письма П.А. Кулиша (1856-1858гг.), Киевская старина, Киев, 1899, N9.

<sup>11</sup>Письмо Каткова к А.Н. Попову от 7 марта 1857г., Русский архив, Москва, 1888 N8; Катков Михаил, Идеология охранительства, Москва, 2009.

արտացոլված են Ուսւաստանում տեղի ունեցող իրադարձությունների արձագանքները արևելահայ հասարակական մտքի ոլորտում<sup>12</sup>:

Ստենախոսության մեջ օգտագործվել են նաև ռուս մի շարք հեղինակների հոդվածներն ու մենագրությունները, որոնք անդրադարձել են 19-րդ դարի ռուսաց հասարակական-քաղաքական կյանքի պատմությանը: Ղրիմի պատերազմի տարիներին, Մեծ բարեփոխումների իրականացման շրջանի և համապատասխանության, լեհական և ուկրաինական հարցերի մասին նշված հեղինակների աշխատանքները կարելի է բաժնել երեք փուլ՝ մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային:

Եթե Ղրիմի պատերազմին վերաբերվող բազմաթիվ աշխատություններ են իրապարակվել<sup>13</sup>, ապա հասարակական-քաղաքական մտքի պատմության հետ կապված աշխատությունների թիվը մեծ չէ: Նախահեղափոխական շրջանում այս խորին անդրադարձել են Ա. Պիափնը, Ն. Կարենը, Ռ. Ֆարենը, Կ. Գրոտը և այլք<sup>14</sup>, որոնք խորին առնչվել են իրմանականում ելմերով ռուսական հասարակական-քաղաքական կյանքում Ղրիմի պատերազմի տարիներին առկա համապատասխան գաղափարների ուսումնասիրության անհրաժեշտությունից: Նախահեղափոխական պատմաքաններից Ն. Բարսուկովը լինելով Ս. Պոգոնիի կենսագիրը, նրան նվիրված աշխատության մեջ մանրամասնորեն ներկայացրել է հասարակական-քաղաքական մտքի տարբեր դրսերումները Ղրիմի պատերազմի տարիներին, սպայան բավարարվել է փաստերի պարզունակ շարադրմանը և ծերնապահ է մնացել անհրաժեշտ վերլուծություններից<sup>15</sup>.

<sup>12</sup>Արարատեան Ար., Մխալանք Վարդապետարանին կրոնի ի գցուշութիւն համագեաց, Տփիսի, 1858; Արարատեան Ար., Ղինագրաւ ընդդէն ստան յարուցելոց ամենապատուական լեզուիս հայոց, Տփիսի, 1858; Առ. քահանա Մանդինեանց, Յայելի դաստիարակութեան ստոպաց, Տփիսի, 1859; Շահնազարեանց Կ.Վ., Դաշնաց թորոյ թնօւթիւնն ու հերումը, Փարիզ, 1862; Սուեֆանոս Նազարյան, Նամականի, Եր., 1969; Խալբանյան Ա., Երկեր, Եր., 1987; Ախվերձու Յ.Փ. Տիֆլիսկ ամառանություն Վերլուծություններից<sup>16</sup>:

<sup>13</sup> Դյուբրովին Հ.Փ., История Крымской войны и обороны Севастополя, в 3-х т., С.Петербург, 1900; Тарле Е.В. Крымская война. В 2-х т., Москва-Ленинград, 1950 և այլն:

<sup>14</sup> Լինչակսկի Պ., Славянофильство и либерализм. Опыт систематического обозрение того и другого, Киев, 1882, Пыпин А.Н., Славянский вопрос по взгляду Ив. Аксакова, Вестник Европы С.Петербург, 1886, N8; Каарев Н., Истриона западной Европы в новое время. (Развитие культурных и социальных отношений). в 7-и т., т.5, С.Петербург, 1898; Пыпин А.Н., Панславизм в прошлом и настоящем (1878). С предисловием и премечаниями В.В. Водовозова. С.Петербург, 1913; Фадеев. Р.А., Собрание сочинений. Наш военный вопрос. Восточный вопрос, в 2-х т., т.2, Часть 2, Мнение о восточном вопросе, С.Петербург, 1889; Гром К.. К Истории славянского самосознания и славянских сочувствий в русском обществе (из 40-х годов XIX столетия), (отдельный оттиск из NN 195, 196, 197 и 198 Правит. Вестника).

<sup>15</sup> Барсуков Н.П., Жизнь и труды М.П. Погодина. в 22т., т.13, С.Петербург, 1899.

Խորհրդային տարիներին նշանավոր պատմաբան Ե. Տառեն «Կրымская война» աշխատության մեջ, անդադարձավ հասարակական-քաղաքական կյանքին, սակայն ինչպես ինքն է նշում խնդիրն ունի նաև նաև ազիտական ուսումնասիրման պահանջ<sup>16</sup>:

Խորհրդային շրջանում Ղրիմի պատերազմի տարիների հասարակական-քաղաքական կյանքը որոշակիորեն ավելի լայն ասպեկտով ուսումնասիրվեց<sup>17</sup>, սակայն այստեղ էլ խորհրդային պատմաբանները տուրք տալով կոնունիստական գաղափարախոսությանը, նորից օրեւկտիվորեն չեն մեկնաբանել հասարակական կյանքում առկա հոսանքների դերն ու նշանակությունը, և մեծ տեղ են հատկացրել հիմնականում Լոնդոնում պատերազմի տարիներին Գերցենի գործունեությանը: Այս շրջանում մեծ բվով ուսումնասիրություններ կատարվեցին նաև Ուսուաստանի 19-րդ դարի հասարակական հոսանքների պատմության վերաբերյալ<sup>18</sup>, սակայն պետք է նշել, որ միայն Վ. Կիտաևն էր, որ «Օմ Ֆրոնդы կ օքրանութեաւ» Իշտորսս ռусскоյ լիբերալիոն մեջ անդրադարձավ Ղրիմի պատերազմի տարիների հասարակական-քաղաքական կյանքին, այն էլ ոչ ամբողջությամբ<sup>19</sup>:

Արդի ռուս պատմագիտությունում Ղրիմի պատերազմի տարիներին հասարակական մտքի պատմությանն անդրադարձել է Ա. Շեպարնյովան՝ «Կրымская война в оценке русского общественного мнения (1853-1856)» աշխատության մեջ<sup>20</sup>. Դեղնակն արդեն ձերագատված գաղափարական կապանքներից, մանրանասն վերլուծության է ենթակլուն հասարակության ներսում եղած տրամադրությունները: Սակայն մենք Շեպարնյովայի հետ համամիտ չենք, եթե նա սլավոնաֆիլներին փորձում է համապակոնական գաղափարախոսությունից հեռու պահել՝ հակառակ կուրտային

<sup>16</sup> Тарле Е.В. Աշ. աշխ., հ.1. էջ 32:

<sup>17</sup> Левин Ш.М., Герцен и Крымская война, Исторические записки, т. 29, Москва, 1949. с. 164-199; Розенталь В.Н., Общественно-политическая программа русского либерализма в середине 50-х годов XIX в. (по материалам Русского вестника за 1856-1857гг.), Исторические записки, т. 70, Москва, 1961, с. 197-222.

<sup>18</sup> Дудзинская Е.А., Славянофилы в общественной борьбе, Москва, 1983; Аллатов М.А., Русская историческая мысль и Западная Европа (XVIII-первая половина XIX века), Москва, 1985; Цимбаев Н.И., Славянофильство: Из истории русской общественно-политической мысли XIX века, Москва, 1986; Русское общество 30-х годов XIX века. Люди и идеи. Мемуары современников, Москва, 1989; Левандовский А.А., Т.Н. Грановский в русском общественном движении, Москва, 1989.

<sup>19</sup> Китаев В.А., От Фронды к охранительству. Из истории русской либеральной мысли 50-60-х годов XIX века, Москва, 1972.

<sup>20</sup> Шепарнева А.И., Крымская война в оценке русского общественного мнения (1853-1856), Орел, 2005.

պատմաբանների<sup>21</sup> այն տեսակետին, որ այնուամենայնիվ սլավոնաֆիլների մոտ համասլավոնականության դրսևորումներ եղել են: Ալեքսանդր Երկրորդի կառավարման և նրա կողմից բարեփոխումների իրականացման քաղաքականությունն ուսումնասիրվել է մինչեղափոխական<sup>22</sup>, խորհրդային<sup>23</sup> և արոի<sup>24</sup> պատմագիտության կողմից: Մեծ բարեփոխումների շրջանում ռուսաց հասարակական-քաղաքական մտքի պատմության անդրադարձել է ռուս պատմաբան Ա. Կոռնիլովը<sup>25</sup>: Աներկայացնելով Ալեքսանդր Երկրորդի գահական ամրող շրջանի հասարակական կյանքը: Յեղինակը մեծ տեղ է հատկացրել ազատական շարժմանը:

Խորհրդային պատմագիտության կողմից համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել Մեծ բարեփոխումների շրջանում հասարակական կարծիքի վերաբերյալ: Առանձին վերցրած տարրեր ոլորտների բարեփոխումների մասին գրվել են տարրեր աշխատությունները<sup>26</sup> պատարիկներով ներկայացնելով հասարակական կարծիքը տվյալ բարեփոխումների նկատմամբ, և այն էլ մեծամասամբ տպակ բարեփոխական զանախատականներ: Ազատական շարժմանը նվիրված աշխատանքներից է և. Պիրումնովայի գենստվային շարժմանը նվիրված ուսումնասիրությունը<sup>27</sup>, որը դուրս չի գալիս խնդրո առարկա թեմայի շրջանականերից: Կարելի է առանձնացնել նաև «Революционная ситуация в России в середине XIX века»<sup>28</sup> ուսումնասիրությունը, որը միայն գովերգում էր «հեղափոխական-դեմոկրատների» գործունեությունը և ներկայացնում գյուղացիական հոլոգումները:

<sup>21</sup>ՏեսՏарլе Е.В., Ծվ. աշխ., Լևин Ш.Մ. Ծվ. աշխ., Ռозенталь В.Н., Ծվ. աշխ., Կовалева И.Н. Славянофилы и знатники в период Крымской войны (1853-1856 гг.). Исторические записки Т.80. М. 1967 с. 181-206:

<sup>22</sup>Джаншиев Г.А., Из эпохи великих реформ. Исторические справки. (5-ое дополненное издание), Москва, 1894; Джаншиев Г.А., А.М. Унковский и освобождение крестьян. Историко-биографические справки, Москва, 1894; Татищев С., Император Александр II. Его жизнь и царствование, Москва, 2006.

<sup>23</sup>Дружинин Н.М., Государственные крестьяне и реформа П.Д. Киселева, Москва, 1946, т.1; Заинчиковский П.А., Отмена крепостного права в России, Москва, 1968; Захарова Л.Г., Самодержавие и отмена крепостного права в России 1856-1861, Москва, 1968; Чернухов В.Г., Внутренняя политика царизма в середины 50-х - до начала 80-х гг. XIX века, Ленинград, 1978.

<sup>24</sup>Великие реформы в России 1856-1874. Под. ред. Л.Г. Захаровоу, Б.Эклофа, Дж. Бушнелла, Москва, 1992; Христофоров И.А., «Аристократическая» оппозиция Великим реформам конец 1850-середина 1870-х гг., Москва, 2002; Захарова Л.Г., Александр II и отмена крепостного права в России, Москва, 2011.

<sup>25</sup>Корнилов А.А., Общественное движение при Александре II (1855-1880). Исторические очерки., Paris, 1905.

<sup>26</sup>Заинчиковский П.А., Военные реформы 1860-1870 годов в России, Москва, 1952; Гармиза В.В., Подготовка земской реформы 1864 года, Москва, 1957; Российское законодательство X-XX веков. В девяти томах. Под общ. Ред. Чистякова О.И. т. 8, Судебная реформа. Москва, 1991.

<sup>27</sup>Пирумова Н.М., Земское либеральное движение. Социальные корни и эволюция до начала XX века. Москва, 1977.

<sup>28</sup>Революционная ситуация в России в середине XIX века, Москва, 1978.

Արդի ռուսական պատմագիտությունը<sup>29</sup> վերանայելով խորհրդային շրջանի հայեցակարգային գաղափարական մոտեցումները, նորովի է լուսաբանում 19-րդ դարում Ալեքսանդր Երկրորդի կողմից իրականացրած բարեփոխումները և դրանց նկատմամբ գնահատականները:

Սլավոնական խնդիրներին անդրադարձել է խորհրդային պատմաբաններից Ա. Նիկիտինը<sup>30</sup>, որը ներկայացնում է սլավոնական կոմիտեների գործունեությունը՝ 19-րդ դարի երկրորդ կեսին: Արդի պատմաբան Բ. Եգորովը<sup>31</sup> անդրադառնալով սլավոնական ժողովուրդների խնդիրներին այն ներկայացնում է սլավոնաֆիլմերի համապակինական գաղափարախոսության համատեքստում: Ուկրաինական հարցին է անդրադարձել ռուս արդի պատմաբան Ա. Միլերը<sup>32</sup>, որը ուկրաինական շարժումը ներկայացրել է ռուսական շահերից ելենիով:

Հայենական պատմաբաններից ատենախոսությունում անդրադարձել ենք Վ. Պարսամյանի, Վ. Ռշտունու, Ա. Ջովհաննիսյանի, Վ. Միքայելյանի, Ա. Արշարունու, Ա. Պողոսյանի, Ռ. Նանումյանի, Վ. Դիլյանի ուսումնասիրություններին<sup>33</sup>, որտեղ վերը նշված հեղինականներն անդրադառնում են Ուսուսատանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ արևելահայ հասարակական հոսանքների արձագանքներին:

Խորհրդահայ պատմաբան Աշ. Ջովհաննիսյանն առաջինն էր, որ հայ հասարակական-քաղաքական այլ հոսանքների հետ մեկտեղ անդրադարձավ ազգային-պահպանական հոսանքին և փորձեց տալ դրա գիտական գնահատականը, որն իր ժամանակի համար առաջընթաց քայլ էր պատմագրության մեջ<sup>34</sup>: Նա արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները բաժանում էր կերպա-աղայական, ազգային-պահպանողական, լիբերալ-բոլորժուական և հեղափոխական-դենկուրատական ուղղությունների: Նոյն սկզբունքով արևմտահայ հասարակական-քաղաքական հոսանքներն առանձնացնում է խորհրդահայ մեկ այլ պատմաբան Յ. Ղազարյանը՝ կերպա-ամիրայական,

<sup>29</sup>Русский консерватизм XIX столетия. Идеология и практика, Под. ред. Гросула В.Я., Москва, 2000; Христофоров И.А. նշվ.աշխ.:

<sup>30</sup>Никишин С.А., Славянские комитеты в России в 1858-1876 годах, Москва, 1960, Никишин С.А., Очерки по истории южных славян и русско-балканских связей в 50-70-е годы XIXв., Москва, 1970.

<sup>31</sup>Егоров Б.Ф., О национализме и панславизме славянофилов. Из истории русской культуры, т.5, (XIXв.), Москва, 1996.

<sup>32</sup>Миллер А.И., «Украинский вопрос» в политике властей в русском общественном мнении (вторая половина XIXв.), С.Петеրբург, 2000.

<sup>33</sup>Պարսամյան Վ., Ա.Ա. Գրիգորյովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եր. 1947; Ջովհաննիսյան Ա. Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 2, Ե, 1956; Ռշտունի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության 1828-1917, Սաս Ա /1828-1878/, Եր., 1960; Միքայելյան Վ., Դրիմի հայկական գաղութի պատմություն /1801-1917/, Եր., 1970; Արշարունի Ա., Մոսկվայի հայ մանուլը, Եր., 1971; Պողոսյան Ա., Ուս-հայ բարեկանության պատմությունից, Եր., 1974; Նանումյան Ռ., Ստեփանոս Նազարյան: Կյանքը և գործունեությունը, Եր., 1978; Պիլյոյն Վ. Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակում և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989:

<sup>34</sup>Ջովհաննիսյան Ա., XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, ՊԲՀ, Եր., 1966 հ.1, էջ 66:

ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական և ազգային-դեմոկրատական<sup>35</sup>:

Խորհրդահայ պատմաբաններից հասարակական հոսանքներին անդրադարձել է նաև Վ. Ռշտունին: Նա պահպանողական և ազատական հոսանքների բոլոր տպագրական օրգանները որպես հետադիմական<sup>36</sup>: Քննադատորեն է մոտենում պահպանողական և ազատական հոսանքներին նաև Ա.Կարինյանը, հանաձայն որի վերը նշված հոսանքները հետադիմական էին, և պայքարում էին «առաջավոր գործիչների դեմ»<sup>37</sup>:

Խորհրդահայ պատմաբաններից Վ. Պարսամյանը<sup>38</sup> հայ հասարակական-քաղաքական հոսանքներն առանձնացրեց երեք ուղղությամբ՝ կրերա-ֆեոդալական, լիբերալ-բուրժուականի և հեղափոխական-դեմոկրատների: Նա նույնպես նախապատվորությունը տալիս է հեղափոխական-դեմոկրատներին:

Խորհրդային շրջանում գերազանցահատելով Մ. Նալբանդյանին՝ անտեսվել են արևելահայ հասարակական շատ գործիչների ունեցած դերն ու գործունեությունը՝ հատկապես Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին արտահայտած նրանց կարծիքները:

Արդի հայ պատմագիտության կողմից<sup>39</sup> հայ հասարակական հոսանքները բաժանվում են երկու խմբի՝ պահպանողականների և ազատականներ: Ըստ Ա. Խառասոյանի այդ երկու հոսանքների՝ «բնութագական գծերն ածանցվում են, նախ, աշխարհայացքային մոտեցումներից» (ազգի պահպանության և զարգացման վերաբերյալ պատկերացումները, ազգային եկեղեցու, ավանդույթների, մշակույթի զարգացման ու գնահատման հիմնահարցեր, վերաբերմուճքը ազգի հասարակական ու քաղաքական դրության նկատմամբ) և ապա հայ հանրության սոցիալական շերտերի գնահատման ու դրանց տրամադրությունների և ձգուումների արտացոլման բնույթից»<sup>40</sup>:

Ուսումնասիրության հանար օգտագործված աղբյուրների ցանկում բավական մեծ թիվ են կազմում ժամանակի ինչպես ռուսական, այնպես էլ հայկական պարբերական նամուլը:

**Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից,

<sup>35</sup>Պազարյան Յ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., Եր., 1967:

<sup>36</sup>Ռշտունի Վ. Դ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Եր., 1956:

<sup>37</sup>Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ.1, Եր., 1956, էջ 381:

<sup>38</sup>Պարսամյան Վ., Հայ հասարակական մտքի հիմնական ուղղությունները XIX դարի երկրորդ կեսին, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1966, էջ 35-52:

<sup>39</sup>Խառասոյան Ա., Հայ հասարակական հոսանքները XIX- 50-70-ական թվականներին, ՊԲՀ, Եր., 2006, հ.1; Դովհաննիսյան Է. Գարրել Այվազովսկին որպես ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչ, Եզմիածին, ԿԳ տարի, 2007, Մայիս; Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես - XIX դարի վերջ), Երևան 2010, Զանգակ 97:

<sup>40</sup>Խառասոյան Ա., Եշվ. աշխ., էջ 272:

Եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, տրված է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «**Հասարակական-քաղաքական միտքը Ուսաստանում 19-րդ 50-ական թվականների առաջին կեսին» բաղկացած է երկու ենթագլուխից:**

